

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին`

Խորհրդի անդամներ`

Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ն. Երիցյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Հ. Քուշբյան	ՀՀ առողջապահության նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Ալավերդյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Խ. Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Հ. Հակոբյան	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ ԳԱԱ-ի նախագահ
Կ. Դանիելյան	<<Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի նախագահ
Դ. Բոբերկ	ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական ներկայացուցչի տեղակալ
Ա. Մարտիրոսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բնապահպանական ծրագրերի համակարգող
Հ. Սայադյան	ՀՀ աշխարհագրական ընկերության գիտական քարտուղար
Գ. Օզանեզովա	ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ
Հ. Սարգսյան	<<Տապան>> Էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ

Ե. Մանվելյան	<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի նախագահ
Ս. Ադամյան	<<Հասարակական էկոլոգիական դաշինք>> ՀԿ-ի համակարգող
Ա. Եղոյան	<<Սպառողների իրավունքների պաշտպանություն>> ՀԿ-ի նախագահ
Ա. Իսկոյան	<<Շրջակա միջավայր իրավական պահպանության կենտրոն>> ՀԿ-ի նախագահ
Ա. Աղաջանյան	<<Արզնու տոհմային թռչնաբուծական, տավարաբուծական, խոզաբուծական ֆաբրիկա>> ԲԲԸ-ի տնօրեն
Հրավիրվածներ`	
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Լ. Ալավերդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ս. Պապյան	ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Զիրոյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ
Մ. Կորխմազյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Է. Ղուկասյան	ՀՀ ԳԱԱ-ի ԿՀԷԳԿ-ի հիդրոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտական քարտուղար
Լ. Սարգսյան	<<Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի ներկայացուցիչ

- Ա. Մարգարյան ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Գասպարյան ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ

1. ՀՀ Կայուն զարգացման հայեցակարգի (ռազմավարության և այլ ռազմավարական փաստաթղթերի հարաբերակցության) հստակեցում. ՀՀ Կայուն զարգացման հայեցակարգի հիմնադրույթների (հիմնական սկզբունքների և մոտեցումների) հստակեցում` Ռիո+20 գործընթացի համատեքստում

 (Կ.Դանիելյան, Տ. Մարգարյան)

1. <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ.Դանիելյանը տեղեկացրեց, որ 2009 թվականի դեկտեմբերի 3-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 64-րդ նստաշրջանում որոշվեց կազմակերպել <<Ռիո+20>> զագաթնաժողովը 2012թ.-ին Ռիո-դե-ժանեյրոյում, որի խորագիրն է`

1) 21-րդ դարի օրակարգի իրականացում.

2) 21-րդ դարի օրակարգի և Կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողովի որոշումների հետագա ծրագրի իրականացում:

Նշեց նաև, որ վերոհիշյալ շրջանակներում նախատեսվող հիմնական քննարկման թեմաներն են`

1) աղքատության կրճատումը.

2) կանաչ էկոնոմիկան.

3) գլոբալ էկոլոգիական բարեփոխումը:

Հավելեց նաև, որ Եվրամիությունը միանալով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ներկայացրած բոլոր դրույթներին ավելացնում է նաև մի շարք առաջարկներ, մասնավորապես`

1) կնքել համաձայնագիր Երկրի (երկրագնդի) հրովարտակի ընդունման և կիրառման վերաբերյալ.

2) ներառել կայուն զարգացումը միջազգային ֆինանսական ինստիտուտների (IMF, WB, WTO) մանդատի մեջ.

3) ավելի լայնորեն ներգրավել քաղաքական հասարակությունը "Ռիո+20" համաշխարհային գործընթացում:

Կարևորեց նաև այն, որ դեռևս 2010 թվականին Ռիո-դե-ժանեյրոյում որոշվել էր մշակել մեկ միասնական կայուն զարգացման համաթիվ, և, որը պետք է ընդունելի լիներ բոլոր երկրների կողմից, բայց վերջինս դեռևս մշակման փուլում է: Տեղեկացրեց նաև, որ նախնական ուսումնասիրությունների արդյունքում կայուն զարգացման ոլորտից ներքև են գտնվում աֆրիկյան և լատինական երկրները, իսկ եվրոպական երկրները մոտենում են, և եթե գնում է զարգացում, ապա իրիստ մեծանում է էկոլոգիական հետքը (ձապոնական, սկանդինավյան երկրներ):

Տեղեկացրեց նաև, որ նախատեսվող զագաթնաժողովի նախապատրաստման համաժողովները կազմակերպվելու են 2011թվականի ընթացքում, ինչպես նաև նշեց, որ զեկույցում կքննարկվեն Հայաստանի Հանրապետության անելիքները վերոհիշյալ գործընթացի շրջանակներում` գլոբալ, ռեգիոնալ, ազգային և լոկալ մակարդակներում:

<<Հանուն կայուն մարդկային զարգացման Ասոցիացիայի>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանը Հայաստանի Հանրապետության համար կարևորեց նաև

կայուն զարգացման հայեցակարգի ընդունումը և գործողությունների ծրագիրը, որն իր մեջ կներառի նպատակները, թիրախները և ռիսկերը, և դա պետք է կապվի հազարամյակի մարտահրավերի նպատակների հետ, հավելեց նաև էկոլոգիական կրթության զարգացման և կրթություն հանուն կայուն զարգացման ծրագրերի ինչպես նաև այդ հարցերին նպատակաուղղված ամսագրի հրատարակման կարևորությունը:

2. Ընդունելի գիտություն <<Հանուն կայուն մարդկային զարգացման Ասոցիացիայի>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանի ղեկույցը ՀՀ Կայուն զարգացման հայեցակարգի (ռազմավարության և այլ ռազմավարական փաստաթղթերի հարաբերակցության) հստակեցման. ՀՀ Կայուն զարգացման հայեցակարգի հիմնադրույթների (հիմնական սկզբունքների և մոտեցումների) հստակեցման մասին՝ Ռիո+20 գործընթացի համատեքստում:

2. <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՕՕ) գործածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի հետ կապված հիմնահարցեր

(Ա. Զիրոյան, Ն. Սարգսյան, Ա. Բսկոյան, Ա. Եղոյան, Գ. Օգանեզովա Լ. Ալավերդյան, Գ. Ալավերդյան, , Ա. Հարությունյան, Տ. Սարգսյան)

1. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ Ա. Զիրոյանը ներկայացնելով <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՕՕ) գործածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի հետ կապված հիմնահարցերը նշեց, որ օրենքը կարգավորում է գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների ստացման, փորձարկման, բազմացման, պահման, ոչնչացման, վնասազերծման, կապազերծման, ներմուծման, արտահանման, ինչպես նաև գենետիկորեն ձևափոխված օրգանիզմի կամ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներից ստացած արտադրանքի շուկայահանման, արտահանման, ներմուծման կամ տարանցիկ փոխադրման հետ կապված հնարավոր անբարենպաստ ազդեցություններից մարդու կյանքի և առողջության, շրջակա միջավայրի, կենսաբազմազանության անվտանգությանն առնչվող հարաբերությունները: Անդրադառնալով օրենքի նպատակներին նշեց, որ դրանք են՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության հետ կապված կենսաանվտանգության ռիսկերի կառավարումը և անվտանգության ապահովումը՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցությունը մարդու կյանքի և առողջության, շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա: Նշեց նաև, որ ներկայացված օրենքի ընդունումը կառաջացնի փոփոխություններ և լրացումներ հետևյալ օրենքներում՝ ՀՀ քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, <<Լիցենզավորման մասին>>, <<Բնապահպանական վերահսկողության մասին>>, <<Պետական տուրքի մասին>> և <<Մնդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքներում: Տեղեկացրեց նաև, որ օրենքի նախագծի փաթեթը ներկայացվել է 13 շահագրգիռ գերատեսչություն և կազմակերպություն, ինչպես նաև տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի քննարկմանը, իսկ առաջարկություններն ու դիտողությունները հիմնականում հաշվի են առնվել ներկայացված օրենքի նախագծի փաթեթում:

2. <<Տապան>> էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ Ն. Սարգսյանն օրենքի ընդունման հարցում կարևորեց հետևյալ կետերը՝

- 1) արգելել ֆիզիկական անձանց կողմից սերմերի ներմուծումը.
- 2) գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառումը (կապազերծում) թույլ տալ միայն գիտական նպատակներով՝ սահմանափակ քանակներով և տարածքներում:

3. <<Շրջակա միջավայր իրավական պահպանության կենտրոն>> ՀԿ-ի նախագահ Ա. Բսկոյանը կարևորեց օրենքի ընդունման հրատապությունը, անհրաժեշտ նորմատիվ

իրավական ակտերի բազայի ձևավորումը: Հավելեց նաև, որ վտանգը կայանում է նրանում, որ դեռևս հայտնի չեն թե ինչքանով են վտանգավոր շրջակա միջավայրի փոփոխությունները վերջինիս վրա, քանի որ գիտականորեն չունեն լուրջ հետազոտություններ և կարևորեց լաբորատորիաների վերազինման և նորերի բացման հարցը: Ուշադրություն հրավիրեց նաև ինտելեկտուալ հետազոտությունների արդյունքում ստացված նոր մարմնի սեփականության իրավունքի հարցի վրա:

4. <<Սպառողների իրավունքների պաշտպանություն>> ՀԿ-ի նախագահ Ա. Եղոյանն առաջարկեց օրենքի նախագծում նախատեսել դրույթ, որի կիրառումը կհանգեցնի դրամական տուգանքների, ինչպես նաև ապահովել գենետիկ սերմերի հետազոտությունը և կարևորեց ներմուծվող ապրանքների պարտադիր մակնշման հարցը:

5. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լ. Ալավերդյանը հարց բարձրացրեց թե արդյոք սահմանում հնարավորություն ունեն ստուգելու ներմուծվող ապրանքների գենետիկորեն ձևափոխված լինելը, ինչպես նաև հարցին առնչվող կարևոր մի շարք այլ խնդիրներ:

6. ՀՀ գյուղատնտեսության նախարար Գ. Ալավերդյանն անդրադառնալով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լ. Ալավերդյանի հարցին տեղեկացրեց, որ դեռևս նման հնարավորություն չունեն և տեղեկացրեց, որ սահմաններում լաբորատորիաներ ունենալը ցանկալի է, բայց բավականին մեծ ծախսերի հետ է կապված:

7. ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ Գ. Օգանեզովան առաջարկեց չշահարկել նախատեսվող արգելքները, այլ նախատեսել խթանող միջոցառումներ՝ հաշվի առնելով հանրապետությունում առկա հարուստ բուսական ռեսուրսները, մասնավորապես, վայրի կուլտուրաների բազմազանությունը:

8. ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանը տեղեկացրեց խորհրդի նիստի մասնակիցներին, որ <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության մասին>> ՀՀ օրենքի նախագիծը տեղադրված է ՀՀ բնապահպանության նախարարության կայքում-էջում:

9. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝ <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության մասին>> ՀՀ օրենքի նախագծում նախատեսել հոդված, սահմանելով, որ հետազոտություններ իրականացնողը ինտելեկտուալ հետազոտությունների արդյունքում ստացված նոր ձևափոխված օրգանիզմների մասին, պարտավոր է տեղեկացնել բնագավառի լիազորված մարմնին.

2) հանձնարարել հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին և առաջարկել հասարակական կազմակերպություններին՝ <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները գրավոր ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին համատեղ քննարկելու և անհրաժեշտության դեպքում դրանք օրենքի նախագծում ներառելու նպատակով:

3. ԿԶԱԽ-ի գործունեության կազմակերպման հարցեր (Խորհրդի քարտուղարության ստեղծում, աշխատանքային խմբերի կազմ, համակարգողներ, այլ)

(Մ. Կորխամազյան, Տ. Սարգսյան)

1. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Մ. Կորխամազյանը ներկայացրեց Կայուն զարգացման ազգային խորհրդի (ԿԶԱԽ) գործունեության կազմակերպման հարցերը և առաջարկեց ընտրել խորհրդի քարտուղար:

2. ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանն առաջարկեց ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղար ընտրել <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանին:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանին նշանակել ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղար.

2) հանձնարարել հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերի ղեկավարներին և առաջարկել հասարակական կազմակերպություններին ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղար Կ. Դանիելյանի պարտականությունները կատարելու և աշխատանքները խթանելու նպատակով հնարավորինս աջակցել նրան.

3) հանձնարարել ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղար Կ. Դանիելյանին՝ ներկայացնել առաջարկություն ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղարության նստավայրի տարածքի հատկացման հետ կապված հարցերի վերաբերյալ:

4. ԿԶԱԽ-ի հետագա նիստերի օրակարգը ձևավորելու համար արդիական և առաջնահերթ հարցերի առաջադրում ու քննարկում

(Մ. Կորխամազյան, Տ. Մարգարյան)

1. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Մ. Կորխամազյանը առաջարկեց քննարկել Կայուն զարգացման ԿԶԱԽ-ի հետագա նիստերի օրակարգը ձևավորելու հետ կապված առաջնահերթ հարցերը:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին և առաջարկել հասարակական կազմակերպություններին՝ ԿԶԱԽ-ի օրակարգի ձևավորման հետ կապված առաջնահերթ հարցերը ներկայացնել ԿԶԱԽ-ի խորհրդի քարտուղար Կ. Դանիելյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳԱՅԱՆ